ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԳՐԱՄ



ՈՒ՞Ր ԵՆ ԿԱՆԱՆՑ ԵՒ ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ու՞ր են կանանց և ֆեմինիստական կազմակերպությունների համար նախատեսված գումարները Հայաստանում

Հետազոտության արդյունքների վերլուծական հաշվետվություն
Հայաստանում կանանց հիմնադրամ

Երևան 2023

Հիմնախնդրի նկարագիր

Ինչպես ցույց են տալիս վերջին տասնամյակում իրականացված հետազոտությունները, աշխարհում գենդերային հավասարությանն ուղղված ֆինանսական ռեսուրսների միայն 1%-ն է բաժին ընկնում կանանց կազմակերպություններին (1): Գիտակցելով այս անարդարության մասշտաբները, ինչպես նաև հիմնվելով նախորդ որոշ հետազոտությունների, քննարկումների արդյունքների և գործընկեր կազմակերպությունների կարիքների գնահատման արդյունքների վրա, Հայաստանում կանանց հիմնադրամը նախաձեռնել է ևս մեկ հետազոտություն, որը վերաբերում է այն հարցին, թե որտեղ են կանանց կազմակերպությունների և նրանց արժանապատիվ գործունեությունն ապահովելու համար նախատեսված գումարները կամ ֆինանսական ռեսուրսները:

Նորություն չէ, որ կանանց և ֆեմինիստական կազմակերպությունների գործունեությունը, կարելի է ասել, հիմնովին կախված է հիմնականում արտաքին ֆինանսավորման աղբյուրներից, այն է՝ դրամաշնորհներից և նվիրատվություններից: Ֆիլանթրոպիկ գործունեությունը, որն իր մեջ ներառում է բացի կանանց ուղղված ֆինանսավորումից նաև այլ ուղղությունների ֆինանսավորում (տարեցներ, երեխաներ, հաշմանդամության տարբեր դրսևորումներ ունեցող անձիք, փախստականներ և այլք), գտնվում է, թերևս, կախյալ և ոչ կայուն վիճակում: Բացի այդ՝ վերջին տասնամյակների ընթացքում աշխարհում տարբեր ուղղություններով մեծ թափ են առել հակագենդերային և հակաֆեմինիստական ծայրահեղ աջական քաղաքականություններն ու դրանք ֆինանսավորող անհատներն ու մեծ կազմակերպությունները (2): Ակնհայտ է, որ դրանք ավելի ընդլայնում են իրենց ուղղությունները՝ ներառելով հակաբնապահպանական, հակափախստական, մարդու իրավունքների դեմ տարատեսակ խմբավորումներին և դրանց կողմից պլանավորվող առցանց (սոցիալական մեդիայի հարթակներում) և իրական (ֆիզիկական) հարձակումները:

1. Where is the money for feminist organizing? New analysis finds that the answer is alarming. | AWID
2. Tatev Hovhannisyan in FemTalks-English.pdf (womenfundarmenia.org)

Վերը նշված և հարակից մի շարք այլ ուղղություններում ակտիվիզմը, ջատագովությունը, պայքարը մարդու հիմնարար իրավունքների համար, ինչպես նաև հետազոտություններն այս ուղղություններում սկսում են «վտանգավոր» լինել շատերի համար: Ըստ էության՝ տեղի է ունենում այն, որ բոլորը սպառվում են՝ ֆիզիկապես և էմոցիոնալ առումով, ինչը տանում է նրան, որ շարժումները դադարում են գործել կամ անցնում են ընդհատակ՝ դեպի վաղեմի ելակետեր: Այդպես, արդյունքում ակտիվիզմը և ջատագովումը դանդաղեցվում կամ դադարում են, շարժումները պասիվանում են, նրանց տարածքները նեղանում են (shrinking), ոլորտում ֆինանսավորում ստացող և գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ֆինանսավորումները դադարում են, իսկ հետազոտական կառույցներն ու ակադեմիան այս ոլորտում զարգացում չեն ապրում: Վերջինի ապացույցը վերջին մի քանի տարիների ընթացքում ԱՄՆ-ի հայտնի համալսարաններում (3) Գենդերային ուսումնասիրությունների դպրոցների փակումն է (ինչի արդյունքում նաև՝ դրանց պետական և այլ աղբյուրներից ֆինանսավորումը), իսկ Հունգարիայում դեռևս 2018 թվականից կառավարության մակարդակում գենդերային ուսումնասիրությունները որպես ակադեմիական ճյուղ ընդհանրապես արգելվեցին և դիտարկվեցին որպես անկարևոր (4):

Բացի ակադեմիական ուղղություններում գենդերային և ֆեմինիստական ուսումնասիրությունների ֆինանսավորման կրճատումներից՝ հատկանշական է (վատ իմաստով), որ ֆինանսավորումները պակասում են կանանց և ֆեմինիստական կազմակերպությունների համար նաև տարբեր երկրներում: Փոփոխության են ենթարկվում նաև տարբեր երկրների արտաքին քաղաքականությունները, որոնք մինչ այդ կոչվում էին ֆեմինիստական: Այդ քաղաքականությունները վերաբերում են կանանց և աղջիկների մարդու իրավունքների պաշտպանությանը և գիտակցմանը, որ նման մոտեցումը նախապայման է արտաքին քաղաքականության ավելի լայն նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են խաղաղությունը, անվտանգությունը և կայուն զարգացումը: Այդ երկրների թվում են.

3. Florida bill would ban gender studies majors, diversity programs at universities | Reuters
4. Gender studies banned at university – the Hungarian government's latest attack on equality (theconversation.com)

Շվեդիա

Շվեդիան առաջին երկիրն էր, որը որդեգրեց ֆեմինիստական արտաքին քաղաքականություն 2014 թվականին: Քաղաքականությունը նպատակ ունի խթանելու գենդերային հավասարությունը և կանանց ու աղջիկների իրավունքները արտաքին քաղաքականության բոլոր ոլորտներում՝ ներառյալ զարգացման համագործակցությունը, առևտուրը և անվտանգությունը: Շվեդիան, ցավոք, դադարեցնում է իր ֆեմինիստական արտաքին քաղաքականությունը կառավարության փոփոխություններից հետո (5):

Կանադա

Կանադան որդեգրեց ֆեմինիստական արտաքին քաղաքականություն 2017 թվականին: Քաղաքականությունը նպատակ ունի խթանելու գենդերային հավասարությունը և կանանց ու աղջիկների հզորացումը արտաքին քաղաքականության բոլոր ոլորտներում՝ ներառյալ խաղաղությունն ու անվտանգությունը, զարգացումը և մարդասիրական օգնությունը (6):

Ֆրանսիա

Ֆրանսիան որդեգրեց ֆեմինիստական արտաքին քաղաքականություն 2019 թվականին: Քաղաքականությունը նպատակ ունի խթանելու գենդերային հավասարությունը և կանանց ու աղջիկների իրավունքները արտաքին քաղաքականության բոլոր ոլորտներում՝ ներառյալ զարգացման համագործակցությունը, մարդասիրական օգնությունը և խաղաղությունն ու անվտանգությունը (7):

Մեքսիկա

Մեքսիկան որդեգրեց ֆեմինիստական արտաքին քաղաքականություն 2020 թվականին: Քաղաքականությունը նպատակ ունի խթանելու գենդերային հավասարությունը և կանանց ու աղջիկների հզորացումը արտաքին քաղաքականության բոլոր ոլորտներում՝ ներառյալ զարգացման համագործակցությունը, առևտուրը և անվտանգությունը (8):

5. Feminist Foreign Policy: Contributions and lessons – GOV.UK (www.gov.uk)
6. Women This Week: Feminist Foreign Policy in Europe | Council on Foreign Relations (cfr.org)
7. A Green Feminist Foreign Policy for the EU | Heinrich Böll Stiftung | Brussels office – European Union (boell.org)
8. Women This Week: Feminist Foreign Policy in Europe | Council on Foreign Relations (cfr.org)

Իսպանիա

Իսպանիան որդեգրեց ֆեմինիստական արտաքին քաղաքականություն 2018 թվականին: Քաղաքականությունը նպատակ ունի խթանելու գենդերային հավասարությունը և կանանց ու աղջիկների իրավունքները արտաքին քաղաքականության բոլոր ոլորտներում՝ ներառյալ զարգացման համագործակցությունը, մարդասիրական օգնությունը և խաղաղությունն ու անվտանգությունը (9):

Վերջերս իր ֆեմինիստական քաղաքակության մասին էր հայտարարել նաև Գերմանիան (10): Սրանք ընդամենը մի քանի օրինակներ են այն բազմաթիվ երկրներից, որոնք որդեգրել են ֆեմինիստական արտաքին քաղաքականություն:

Վերը նշված արտաքին քաղաքականությունների մասին խոսելն այս համատեքստում մեծապես կարևոր է, քանի որ Հայաստանի ժողովրդավարացման տարատեսակ փուլերում այդ պետություններից որոշները հանդիսանում են «մեծ ֆինանսավորողներ» կամ դոնորներ: Իսկ մասշտաբային գործունեության համար կանանց և ֆեմինիստական կազմակերպությունները կարիք ունեն մեծ ֆինանսավորումների:

Ֆեմինիստական շարժումներն ու կազմակերպությունները ֆինանսավորում ստանալու հարցում հաճախ բախվում են զգալի մարտահրավերների: Համաձայն Զարգացման կանանց իրավունքների ասոցիացիայի (AWID) զեկույցի՝ զարգացման օգնության և դրամաշնորհների 99%-ն ուղղակիորեն չի հասնում կանանց իրավունքներին ու ֆեմինիստական կազմակերպություններին և այնպիսի խմբերին, ինչպիսիք են ԼԳԲՏԻՔ+ անձիք, բնիկ ժողովուրդները տարբեր տարածքներում, փախստականները, երիտասարդ ֆեմինիստները և սեքս աշխատողները, որոնք նույնիսկ ավելի քիչ են ֆինանսավորվում (11):

Այս իմաստով կարևոր են քննարկումները հենց ֆինանսավորման աղբյուրների մասին՝ դրանց ուղղությունները հասկանալու տեսանկյունից:

9. Ibid.
10. Feminist Foreign Policy: Contributions and lessons – GOV.UK (www.gov.uk)
11. New Brief: Where Is The Money for Feminist Organizing? | AWID

Ինչպես ցույց են տալիս թեմատիկ ուսումնասիրությունները, ֆինանսավորումներն ահռելի տարբերություններ ունեն՝ կախված դրանց օգտագործման աշխարհագրական և գաղափարական տարածքներից: Մինչ Հյուսիսային Ամերիկայում ստացողներին հասանելի է 825 միլիոն դոլար ծկուն աջակցություն, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բնակիչները ստանում են հազիվ 9 միլիոն դոլար, ինչը համարժեք է Հյուսիսային Ամերիկայի ընդհանուրի ընդամենը 1%-ին: Իսկ դեպի Հայաստան եկող նման աջակցություններն է՛լ ավելի սահմանափակ են ու սակավ (12):

Անհրաժեշտ է նաև դիտարկել ավելի մեծ տնտեսական հոսքերի ուղղությունները՝ ֆիլանթրոպիայում իշխանության անհամաչափությունը տեսնելու համար: Ֆինանսավորման ձևերի մեջ տարածաշրջանային տարբերություններն առաջանում են հարստության ծայրահեղ անհամամասնության ֆոնին, որն ակնհայտ է նաև մարդու իրավունքների ֆինանսավորման մեջ.

- Հիմնադրամների կողմից մարդու իրավունքների ֆինանսավորման 99%-ը տրամադրվում է Գլոբալ Հյուսիսի ֆինանսավորողների կողմից: Այդ ֆինանսավորման 88%-ը (3,7 մլրդ դոլար) ուղղվում է Գլոբալ Հյուսիսի ստացողներին, իսկ 12%-ը (495 մլն ԱՄՆ դոլար)՝ Գլոբալ Հարավում և Արևելքում ստացողներին:
- Հիմնադրամների կողմից մարդու իրավունքների ֆինանսավորման 1%-ը տրամադրվում է Համաշխարհային Հարավի և Արևելքի ֆինանսավորողների կողմից: Այդ ֆինանսավորման գրեթե 100%-ը (45 մլն դոլար) մնում է Գլոբալ Հարավում և Արևելքում, և 1%-ից պակաս (151,000 դոլար) բաժին է ընկնում Գլոբալ Հյուսիսում գտնվող ստացողներին:

Ռեսուրսների կամ հարստության այս անհավասարակշռությունը նշանակում է, որ դրամաշնորհների մեծ մասը վերահսկվում է Գլոբալ Հյուսիսի ֆինանսավորողների կողմից, և ֆինանսավորման մեծ մասը մնում է այնտեղ: Ավելին՝ ինչպես ցույց են տալիս թվային ցուցանիշները, ըստ ֆինանսավորման տարածաշրջանի՝ Հյուսիսային Ամերիկային բաժին է ընկնում ամենամեծ ֆինանսավորումը, իսկ Արևելյան Եվրոպային և Մերձավոր Արևելքին՝ ամենաքիչը (13):

12. Trust-Gap-Report-HRFN.pdf
13. Ibid.

Մի շարք կազմակերպությունների և նախաձեռնությունների ֆինանսավորման արդյունքում ավելի ուժեղանում է հենց ֆեմինիստական շարժումը՝ հնարավորություն ունենալով ընդգրկելու և հասանելի լինելու ավելի շատ մարդկանց: Սակայն, միևնույն ժամանակ, անհերքելի է, որ ֆեմինիստական և կանանց կազմակերպությունները, իրենց ներդրումն ունենալով մի շարք ֆեմինիստական հարցադրումներ բարձրացնելու և մի շարք ֆեմինիստական օրակարգային հարցեր լուծելու ջատագովության միջոցով, ամբողջապես չեն կազմում ֆեմինիստական շարժումը: Ֆեմինիստական շարժումն ավելի ընդարձակ է, քան կազմակերպության կամ խմբի միջոցով իրականացվող այս կամ այն ծրագիրը, իսկ դրա փիլիսոփայությունն ընդգրկում է բազմազան գործողություններ և ֆեմինիստ նույնականացող կամ չնույնականացող մարդկանց:

Կան ֆեմինիստական շարժումների ընդլայնումը ֆինանսավորելու մի քանի եղանակներ, որոնցից մի քանի օրինակներ ներկայացված են ստորև.

Ֆեմինիստական հիմնադրամներ

Ֆեմինիստական հիմնադրամները դրամաշնորհներ տրամադրող կազմակերպություններ են, որոնք ֆինանսավորում և ռեսուրսներ են տրամադրում ֆեմինիստ ակտիվիստներին և կազմակերպություններին ամբողջ աշխարհում: Այս հիմնադրամները նպատակ ունեն աջակցելու Գլոբալ Հարավում գտնվող ֆեմինիստական շարժումներին և կազմակերպություններին, որոնք պատմականորեն քիչ են ֆինանսավորվել և մարգինալացված են եղել (14):

Ուղղակի ֆինանսավորում

Ուղղակի ֆինանսավորումը ներառում է ֆինանսական աջակցություն ուղղակիորեն ֆեմինիստական շարժումներին և կազմակերպություններին, այլ ոչ թե միջնորդների կամ այլ կազմակերպությունների միջոցով:

14. How funders can resource feminist movements: concrete practices to Move More Money to the Drivers of Change | AWID

Գործընկերություններ

Ֆեմինիստական շարժումների և այլ կազմակերպությունների միջև համագործակցությունը կարող է օգնել ֆեմինիստական շարժումներին ֆինանսավորում և ռեսուրսներ տրամադրել:

Ֆինանսավորման ևս մեկ օրինակ է բիզնես կորպորացիաների կողմից սոցիալական պատասխանատվության փաթեթների շրջանակներում տարբեր կազմակերպությունների կամ խմբերի ֆինանսավորումը՝ տարատեսակ ծրագրեր կամ միջոցառումներ իրականացնելու նպատակով: Ցավոք, Հայաստանում կորպորացիաների կողմից հատկապես կանանց և ֆեմինիստական կազմակերպությունների օրակարգային խնդիրներին (ընտանեկան բռնություն, տարբեր տարիքային խմբերի կանանց սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների և այլն) արձագանքի պրակտիկան զարգացած չէ:

Նման օրինակները կարող են լինել շատ տարբեր, քանի որ ինչպես ֆեմինիստական ուղղությունները, այնպես էլ դրանց ֆինանսավորման ձևերը բազմազան են և ճկուն՝ այլ ֆինանսավորումների համեմատ:

Կանանց և ֆեմինիստական կազմակերպությունների ֆինանսավորողների շարքում են հատկապես կանանց և ֆեմինիստական հիմնադրամները: Վերջիններից որոշներն աշխատում են ամբողջ աշխարհում և ֆինանսավորում են թե՛ տեղի կանանց հիմնադրամներին, թե՛ տեղական կանանց և ֆեմինիստական կազմակերպություններին ու նախաձեռնություններին: Դրանց շարքում են, օրինակ, Կանանց համաշխարհային հիմնադրամը, Հավասարության հիմնադրամը, Մամա Քեշ հիմնադրամը, Միջազգային տրանս հիմնադրամը, Դորիա հիմնադրամը՝ հիմնականում Մերձավոր Արևելքում ֆինանսավորող, և այլն: Այս հիմնադրամների՝ ներառյալ նաև Հայաստանում կանանց հիմնադրամի գործունեության շրջանակներում շեշտը դրվում է վստահության վրա հիմնված հարաբերությունների կառուցման և մասնակցային դրամաշնորհների տրամադրման պրակտիկայի ընդլայնման վրա:

Կիսելով ֆինանսական ռեսուրսների մասին որոշումներ կայացնելու իշխանությունը և ստեղծելով իշխանության տարածման էկոհամակարգեր (15)՝ հիմնադրամները կարողանում են փոքր-ինչ ավելի խորացնել ֆեմինիստական շարժումները տեղական մակարդակում: Կիսելով իշխանությունը թե՛ կազմակերպությունների և թե՛ չգրանցված խմբերի համար՝ նաև հնարավորություն է ստեղծվում ավելի ազատ ու անկաշկանդ լինելու ֆինանսավորող կողմերի հետ և քննարկելու սեփական՝ տեղական օրակարգերը՝ դրանք «դոնոր համայնքի» օրակարգերին հարմարեցնելու փոխարեն: Միևնույն ժամանակ՝ չենք կարող չշեշտել, որ անգամ այս հիմնադրամների կողմից հավաքագրված ֆինանսական ռեսուրսները սահմանափակ են և պետք է բաշխվեն տարբեր աշխարհագրական տարածքներում գտնվող հիմնադրամների և կազմակերպությունների միջև:

Հետազոտության նպատակ

Այս հետազոտության նպատակն էր կառուցել միասնական մի պատկեր, որը ցույց կտար, թե ինչ վիճակում են կանանց և ֆեմինիստական կազմակերպությունները գտնվում ֆինանսապես, և ինչ է հնարավոր անել վերջիններիս գործունեության համար ավելի շատ ռեսուրսներ ներգրավելու ուղղությամբ: Որպես հիմնադրամ՝ սա ՀԿՀ-ին հնարավորություն կտա հասկանալու, թե որտեղ է Հիմնադրամի դերն այս ռեսուրսների ներգրավման գործում, և որոնք են ակնկալիքները հենց Կանանց հիմնադրամից:

Հետազոտության ընտրանք

Հարցմանը մասնակցել են ընդհանուր առմամբ 20 տեղական կանանց և ֆեմինիստական կազմակերպություններ, որոնք գործում են ՀՀ տարբեր մարզերում և Երևանում: Ըստ այդմ՝ կարելի է պնդել, որ հարցման ընտրանքը ներկայացուցչական է, քանի որ ընդգրկում է բոլոր ՀՀ մարզերը: Հարցումն իրականացվել է 2023 թվականի հունիս-հուլիս ամիսների ընթացքում: Մինչ այդ՝ դեռևս 2022 թվականից, սկսվել են հետազոտության հետ կապված նախապատրաստական և պլանավորման աշխատանքները:

15. https://ssir.ebookhost.net/ssir/digital/88/ebook/1/download.pdf

Կազմակերպությունների բնութագիր

Հաշվի առնելով մասնակից կազմակերպությունների աշխատակիցների քանակը՝ կարելի է փաստել, որ ներկայացված են փոքր և միջին հասարակական կազմակերպություններ (Աղ. 1):

Աղյուսակ 1. Կազմակերպությունների բաշխումն ըստ աշխատակազմի չափի

Աշխատակիցների թիվը	#
1-1o	**15**
11-20	**4**
21-30	**1**
Ընդամենը	**20**

Աղյուսակ 2. Կազմակերպությունների բաշխումն ըստ գործունեության տևողության

Քանի տարի է գործում կազմակերպությունը	#
1-5	**7**
6-15	**6**
Ավելի քան 15	**7**
Ընդամենը	**20**

Աղյուսակ 3. Կազմակերպությունների բաշխումն ըստ աշխատակիցների թվի և գործունեության տևողության

Աշխատա-կիցների թիվը	Քանի տարի է գործում կազմակերպությունը			
	1–5	**6–15**	**Ավելի քան 15**	**Ընդամենը**
1–10	7	4	4	15
11–20	0	2	2	4
21–30	0	0	1	1
Ընդամենը	**7**	**6**	**7**	**20**

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը (20-ից 15-ը) մինչև տասը աշխատակից ունեցող է՝ միջինում 8 հոգանոց խմբերի գերակշռմամբ: Մինչդեռ կազմակերպության գործունեության տևողության տեսանկյունից որևէ օրինաչափություն չի նկատվել. հարցմանը մասնակցել են թե՛ նորաստեղծ, թե՛ փորձառու, թե՛ ոլորտի առաջամարտիկ, երկարատև գործունեություն ծավալած կազմակերպություններ:

Պատկեր 1-ում ներկայացված է մասնակից կազմակերպությունների հիմնական գործունեությունը՝ ըստ լուծման կարիք ունեցող համապատասխան հիմնախնդիրների:

Պատկեր 1. Կազմակերպությունների ծրագրային ուղղությունները

Հարկ է նշել, որ մասնակից կազմակերպությունների ծրագրային ուղղություններն ու թեմաները, ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, հիմնականում բխում են հենց շահառուների կարիքներից ու տիրող իրավիճակից (տե՛ս Պատկեր 2):



Պատկեր 2. Ծրագրային ուղղությունների ընտրության ձևերը

Կազմակերպությունների մոտ կեսն իր ծրագրային ուղղությունները որոշում է՝ ելնելով շահառուների կարիքներից, մեկ քառորդն ընտրում է ծրագրերն ընդհանուր ժողովների ժամանակ՝ ամբողջ թիմով, իսկ կազմակերպություններից երեքը ծրագրերը մշակում են դոնորների առաջարկներին համապատասխան: Միանձնյա ծրագրերի ընտրության փորձառություն ուներ մեկ կազմակերպություն, ինչը խոսում է նրա մասին, որ կանանց կազմակերպությունները ՀՀ-ում գործում են սոլիդարության ու հորիզոնական փոխհարաբերությունների մոտեցմամբ և ոչ թե ուղղահայաց հիերարխիկ որոշումների կայացման մոդելով: Այս բնութագիրը կարմիր թելով անցնում է նաև հետազոտության մյուս բաժիններում, որոնք քննարկվում են ստորև:

Հետազոտության վերլուծական բաժինների ամփոփման փոխարեն ներկայացված են վերլուծության եզրակացությունից բխող առաջարկությունները: Հաշվետվության ներկայացման այս մոտեցումը հնարավորություն է տալիս քննարկվող խնդրից անմիջապես հետո տեսնելու դրանից բխող առաջարկն ու փաստագրելու այն:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Կազմակերպությունների ֆինանսական կայունությունը

Ինչպես ցանկացած գործունեության պարագայում, հասարակական կազմակերպությունները ևս ֆինանսական կայունության և ապահովման խնդրի առաջ են կանգնած, որպեսզի կարողանան ապահովել իրենց աշխատանքի շարունակականությունը և կայունությունը: Լինել ֆինանսապես կայուն նշանակում է հնարավորություն ունենալ կառավարելու միջոցները՝ կազմակերպության առաքելությանը համահունչ գործունեության զարգացման, ծավալման և իրականացման համար, միևնույն ժամանակ՝ հաշվարկելով բոլոր ֆինանսական ռիսկերն ու ունենալով ֆինանսական ապահովության այլընտրանքային պլան (financial contingency plan): Ֆինանսական կայունության մասին խոսելիս կարևոր է համեմատել առկա ֆինանսական ռեսուրսները և կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ բյուջեն, քանի որ վերջինիս միջև եղած բացասական տարբերությունը վկայում է այն մասին, որ կազմակերպությունն ունի ֆինանսական ոչ կայուն կարգավիճակ, և, հետևաբար, իր գործունեությունը սահմանափակվում է միայն կոնկրետ ծրագրերով ու ծրագրային գործողություններով՝ առանց ընդհանուր գործունեության ծավալման հնարավորությունների:

Այսպիսով, հարցված կազմակերպություններից միայն 6–ն են նշել, որ իրենց վերջին տարվա բյուջեն և անհրաժեշտ բյուջեն համապատասխանել են իրար (տե՛ս Աղյուսակ 4–ում կապույտ գույնի նշումները):

Աղյուսակ 4. Կազմակերպության առօրյա գործունեությունը պահպանելու համար անհրաժեշտ ու առկա տարեկան բյուջեների համեմատություն

Կազմակերպության առօրյա գործունեությունը պահպանելու համար անհրաժեշտ տարեկան բյուջե							
	Պահանջվող Առկա	<$30,000	$30,000–$50,000	$50,000–$150,000	$150,000–$300,000	$300,000–$500,000	>$500,000
Նախորդ տարվա բյուջե	<$30,000			5	1		
	$30,000–$50,000			3			
	$50,000–$150,000		1	4	1		
	$150,000–$300,000			1	1		1
	$300,000–$500,000					1	1
	>$500,000						

Եվս 12 կազմակերպություն նշել է, որ իրենց նախորդ տարվա բյուջեն եղել է ավելի քիչ, քան դրա կարիքը ունեցել է կազմակերպությունը (տե՛ս Աղյուսակ 4-ում կարմիր գույնի նշումները), հիմնականում նշվել է, որ լիարժեք գործունեության համար կազմակերպությանն անհրաժեշտ է եղել 150,000-300,000 ԱՄՆ դոլար, մինչդեռ տրամադրված դրամաշնորհներով ընդհանուր բյուջեն չի գերազանցել 50,000 ԱՄՆ դոլարը: Հարցված կազմակերպություններից ընդամենը 2-ն են նշել, որ իրենց նախորդ տարվա բյուջեն եղել է նույնիսկ ավել, քան անհրաժեշտ է եղել տարեկան՝ կազմակերպության առօրյա գործունեությունը պահպանելու համար (տե՛ս Աղյուսակ 4-ի կանաչ գույնի նշումները):

Հետաքրքրական է, որ անհրաժեշտ և առկա գումարների վերլուծության մեջ չի նկատվում որևէ օրինաչափություն կազմակերպության չափի (աշխատակիցների թվի) և գործունեության ժամկետի միջև: Միևնույն ժամանակ, կազմակերպությունների կեսից ավելին գտնում է, որ Հայաստանում գործող իրենց նման կազմակերպությունները գտնվում են ֆինանսապես անկայուն վիճակում, ինչն ուղիղ համեմատական է առկա բյուջեի և անհրաժեշտ բյուջեի միջև ակնհայտ ճեղքվածքին: Մինչդեռ ֆինանսական համեմատաբար կայունություն արձանագրող վեց կազմակերպություններից երեքը նշել են, որ ի տարբերություն ոլորտում գործող այլ նմանատիպ կազմակերպությունների՝ իրենք իրենց կազմակերպությունը համարում են ֆինանսապես ավելի կայուն և ավելի արագ զարգացող (մանրամասները տե՛ս Հավելված 1, Աղյուսակ 10-ում):

Այնուամենայնիվ, տվյալները փաստում են, որ ՀՀ-ում ֆեմինիստական կազմակերպությունների գործունեությունը զուգորդվում է ֆինանսական դժվարություններով ու ռիսկերով: Կազմակերպություններին տրամադրվող ֆինանսավորումը մեծամասամբ լինում է կոնկրետ ծրագրային, ինչը չի ենթադրում պահպանման ծախսեր, հետևաբար՝ կազմակերպության ընդհանուր գործունեության ապահովման համար առկա ֆինանսական ռեսուրսները բավարար չեն լինում:

Եզրակացությունից բխող առաջարկություն #1

Հնարավորության դեպքում, առաջարկվող դրամաշնորհները դարձնել հնարավորինս ճկուն ու ծախսային խիստ սահմանափակումներ չենթադրող, որպեսզի կազմակերպությունները հնարավորություն ստանան իրենց պահպանման և գործունեության ծախսերը տեղավորելու դրամաշնորհի գումարների մեջ:

Ֆինանսավորման աղբյուրներ

Հասարակական կազմակերպությունների գործունեության ապահովման համար անհրաժեշտ են ֆինանսավորման աղբյուրներ, որոնք կարող են լինել տարբեր՝ կախված ինչպես ֆինանսավորողից, այնպես էլ ֆինանսավորման չափից, տևողությունից և հաճախակիությունից: Ինչպես ցույց է տալիս հայաստանյան փորձը, ՀՀ-ում ՀԿ-ների ֆինանսավորումները կարող են լինել թե՛ պետական, թե՛ մասնավոր և թե՛ միջազգային կառույցներից: Այս մասին է վկայում նաև իրականացված հետազոտությունը, որի արդյունքները ապացուցում են, որ ֆեմինիստական ՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրը արտասահմանյան դոնորներից ստացված դրամաշնորհներն են, երկրորդ տեղում են տեղական դոնորներից՝ ներառյալ Հայաստանում կանանց հիմնադրամից ստացված դրամաշնորհները: Ըստ ստացված պատասխանների՝ կարելի է փաստել, որ ֆեմինիստական կազմակերպությունները հազվադեպ են ստանում պետական ֆինանսավորում, քանի որ միայն չորս կազմակերպության կողմից է նշվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որպես ֆինանսավորող կողմ: Հետաքրքրական է, որ ԼԳԲՏ հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների մեծամասնությունը նշել է, որ ֆինանսավորման միակ աղբյուրը արտասահմանյան դոնորների դրամաշնորհներն են:



Պատկեր 3. Ֆեմինիստական կազմակերպություններ ֆինանսավորող կառույցները

Այսպիսով, ինչպես երևում է Պատկեր 3-ից, կազմակերպությունները նշել են թե՛ տեղական, թե՛ միջազգային և թե՛ պետական կազմակերպությունների, որոնց կողմից ստանում են դրամաշնորհային աջակցություն և իրականացնում են իրենց ծրագրերը: Պատկերում թվարկված կազմակերպությունները հարցվողների կողմից մեկից ավելի անգամ նշվածներն են, հերթականությունը՝ ըստ նշվելու հաճախականության: Ներկայացված կառույցներից զատ՝ առանձին կազմակերպությունների կողմից նշվել են նաև հետևյալ կառույցները՝ Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (NDI), Kvinna till Kvinna հիմնադրամը, Equality Fund-ը, Red Umbrella հիմնադրամը, ինչպես նաև տարբեր երկրների դեսպանատներ (Շվեդիա, Ֆրանսիա, ԱՄՆ) և այլ հիմնադրամներ ու կառույցներ: Ինչպես երևում է պատկերից, պետական կառույցներից միակը, որ նշվում է որպես ֆեմինիստական կազմակերպություններին ֆինանսավորող կառույց, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է:

Այն հարցին, թե որոնք են այն հիմնական դժվարությունները, որոնց հետ բախվում են իրենց ֆինանսական գործունեությունն ապահովելիս, կազմակերպությունները նշել են հետևյալ դժվարությունները՝ ըստ ամենահաճախ հանդիպող խոչընդոտի.

1. Դոնորների կողմից տրվող դրամաշնորհները միայն հստակ ծրագրերի համար են, իսկ կազմակերպության զարգացման/պահպանման համար տրամադրվող գումարը շատ փոքր է /նշվել է 17 կազմակերպության կողմից/,
2. Դրամաշնորհային ծրագրերը կարճաժամկետ են և ունեն փոքր ֆինանսավորում /նշվել է 15 կազմակերպության կողմից/,
3. Կազմակերպությունը «գոյատևում է» դրամաշնորհից դրամաշնորհ /նշվել է 11 կազմակերպության կողմից/,
4. Կազմակերպությունը դժվարություններ ունի աշխատակազմի աշխատավարձերի վճարման հետ կապված /նշվել է 10 կազմակերպության կողմից/,
5. Կազմակերպությունը դժվարություններ ունի գրասենյակային ծախսերի (ներառյալ՝ վարձակալության գումարի) հետ կապված /նշվել է 10 կազմակերպության կողմից/,

6. Առաջարկվող դրամաշնորհների պահանջները շատ բարդ են, պահանջում են մեծ քանակությամբ փաստաթղթերի հավաքագրում, կազմակերպության աշխատանքի պատմություն և մեծ փորձ /նշվել է 5 կազմակերպության կողմից/,
7. Առաջարկվող դրամաշնորհների հայտերը բարդ են, և իրենք չունեն համապատասխան կարողություններ դրանք լրացնելու համար /նշվել է 4 կազմակերպության կողմից/:

Այսպիսով, պարզ է դառնում, որ տեղական ֆեմինիստական ՀԿ-ների համար գլխավոր հիմնախնդիրը կազմակերպության զարգացման ու պահպանման դժվարությունն է, քանի որ կոնկրետ այդ նպատակին ուղղված ֆինանսավորում դոնորները սովորաբար կա՛մ չեն տալիս, կա՛մ ընդհանուր գումարի մեջ նախատեսված տոկոսայնությունը չի բավարարում: Այստեղից նաև բխում են աշխատակազմի աշխատավարձերի և կազմակերպության գործունեության ծավալման համար վարձակալած տարածքի վճարի տրամադրման դժվարությունները: Միևնույն ժամանակ, դրամաշնորհների կարճաժամկետությունը հնարավորություն չի տալիս կազմակերպություններին համապարփակ ծրագրերի ու գործունեության ծավալման համար, և ստացվում է, որ ֆեմինիստական կազմակերպությունները ՀՀ-ում գոյատևում են կարճաժամկետ դրամաշնորհներից դրամաշնորհներ:

Եզրակացությունից բխող առաջարկություն #2

ՀՀ-ում ֆեմինիստական կազմակերպությունների գործունեությունը խթանելու համար պետք է իրականացնել ջատագովման աշխատանքներ ֆինանսավորման ժամկետների ու հնարավոր համագործակցությունների ուղղությամբ, որպեսզի կազմակերպությունները ֆինանսական ապահովության ավելի լայն հնարավորություններ ստանան:

Ֆինանսական կայունության քաղաքականություններ ու ռազմավարություններ

Ֆինանսավորման հայթայթման և մշտական ֆինանսավորում չունենալու արդյունքում առաջացող հիմնախնդիրներին զուգահեռ՝ խնդիր է ծագում նաև ընդհանրապես ֆինանսավորման բացակայության պարագայում կազմակերպությունների գործունեության շարունակականության հետ կապված: Այսպիսով, հարցման մասնակից կազմակերպությունների կեսից ավելին (20-ից 11-ը) նշել է, որ ֆինանսավորման բացակայության դեպքում իրենց կազմակերպությունը կարող է շարունակել առօրյա գործունեությունն ընդամենը մեկից երեք ամիս, չորս կազմակերպություն նշել է, որ հազիվ մեկ ամիս, մինչդեռ երեք կազմակերպություն նշել է, որ վեց ամիս կարող է ծավալել գործություն առանց ֆինանսավորման, իսկ ևս երկու կազմակերպություն նշել է, որ մեկ տարուց ավել կարող է առօրյա գործունեություն վարել, եթե անգամ չունենա որևէ ֆինանսավորում:



Պատկեր 4. Ֆինանսական կայունության ցուցանիշ

Ի դեպ, առանց ֆինանսավորման վեց ամիս և մեկ տարուց ավել գործունեություն ծավալելու հնարավորություն ունեցող կազմակերպություններից ընդամենը մեկն է նշել, որ ունի պահուստային գումարներ /ռեզերվներ/: Մյուս չորս կազմակերպությունները, որ նշել են ռեզերվներ ունենալու մասին, նշել են, որ առանց ֆինանսավորման կարող են շարունակել գործունեությունը մեկից երեք ամիս, իսկ ևս մեկը՝ մեկ ամսից էլ քիչ: Մնացած 14-ը՝ այսինքն մեծամասնությունը, նշել է, որ պահուստային գումարներ չունի:

Աղյուսակ 5. Առանց ֆինանսավորման կազմակերպությունների առօրյա գործունեության հնարավորություններն՝ ըստ պահուստային ռեզերվի առկայության

	Ռեզերվ		
Առանց ֆինանսավորում	**Այո**	**Ոչ**	**Ընդամենը**
Հազիվ մեկ ամիս	1	3	4
Մեկից երեք ամիս	4	7	10
Վեց ամիս	1	2	3
Մեկ տարուց ավելի	0	2	2
Ընդամենը	6	14	20

Ֆինանսական կայունությունը ենթադրում է նաև որոշակի պլանների ու մեխանիզմների առկայություն ու դրանց կիրառություն, ինչը ենթադրում է դիվերսիֆիկացված ֆինանսավորման ստեղծում՝ ֆինանսական ռիսկը նվազագույնի հասցնելու և ինքնավարությունը ամրապնդելու համար: Ֆինանսական կայունության քաղաքականությունը սահմանում է, թե ինչպես է կազմակերպությունը պլանավորում ֆինանսավորել իր աշխատանքը՝ իր նպատակներին հասնելու համար, և ներառում է ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում, ծախսերի կրճատում և ֆինանսավորման հուսալի հոսքերի զարգացում: Իրականացնելով այս

ռազմավարությունները՝ հասարակական կազմակերպությունները կարող են դիմակայել տնտեսական տատանումներին և պահպանել իրենց գործունեությունը (16):

Ըստ էության՝ ֆինանսական կայունության ռազմավարությունը կազմակերպության ռազմավարական պլանի անբաժանելի մասը պետք է կազմի: Սակայն, ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, մասնակից կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը (20-ից 15-ը) չունի ֆինանսական կայունության քաղաքականություն, ինչն ուղիղ համեմատական է նաև պահուստային գումարների բացակայության հետ: Այսպես, հարցված կազմակերպություններից 12-ը նշել են, որ իրենք միաժամանակ չունեն ո՛չ պահուստային միջոցներ, ո՛չ էլ ֆինանսական կայունության քաղաքականություն (տե՛ս Պատկեր 5):

Պատկեր 5. Ֆեմինիստական կազմակերպությունների ֆինանսական կայունության քաղաքականության ու պահուստային գումարների առկայության համեմատությունը



16. Sustaining Your NGO's Mission: A Roadmap to Financial Sustainability | Humentum

Այս հանգամանքը բացատրելի է մի կողմից նրանով, որ որոշ կանանց և ֆեմինիստական կազմակերպություններ Հայաստանում ավելի նորաստեղծ և առաջին քայլեր անող կազմակերպություններ են: Մյուս կողմից՝ նման պահանջ չի նկատվել նաև երկարատև աշխատանքային գործունեության ընթացքում: Մեկ այլ կողմից էլ՝ քանի որ կանանց և ֆեմինիստական կազմակերպությունները հիմնականում գերծանրաբեռնված են տարբեր խմբերի կանանց հոգեբանական, սոցիալական, իրավաբանական և անվտանգային ծառայություններ մատուցելով, հասկանալի է, որ ժամանակ չի մնում կազմակերպության դիմակայունությունն ավելի ուժեղացնելու ուղղությամբ աշխատելու: Մեծ մասամբ այս կազմակերպությունները ստիպված են մինչև մեկ ֆինանսավորման ավարտը մտածել և դիմել այլ ֆինանսավորումների՝ մի շարք հարցերի կայունությունն ապահովելու համար:

Եզրակացությունից բխող առաջարկություն #3

Ստացված արդյունքը մատնանշում է այն բացն ու կարիքը, որն ունեն այսօր ֆեմինիստական փոքր կազմակերպությունները ՀՀ-ում, այն է՝ ֆինանսական կայունության քաղաքականության մշակման և կիրառման շուրջ կարողությունների բարձրացման և պատշաճ ուղղորդման ապահովում: Կազմակերպություններին այս առումով տրամադրված ցանկացած աջակցություն կարող է կարևոր լինել ֆինանսական կայունության ապահովման գործընթացում:

Հետաքրքրական է, որ կազմակերպությունների ուղիղ կեսը նշել է, որ ունի ֆոնդահայթայթման պլան կամ դրանով զբաղվող պատասխանատու անդամ/ներ, իսկ մյուս կեսն ասել է, որ նման պրակտիկա իրենց կազմակերպությունում չկա (տե՛ս հավելված 1, աղյուսակ 14):

Աղյուսակ 6. Ֆոնդահայթայթման պլանի առկայությունն ու ծրագրային ուղղությունների որոշումը

Արդյո՞ք կազմակերպությունն ունի ֆոնդահայթայթման պլան և մարդ/իկ, ովքեր զբաղվում են ֆոնդահայթայթմամբ	Այո	Ոչ	Ընդամենը
Ինչպե՞ս են որոշվում Ձեր կազմակերպության ծրագրերի/ծրագրային ուղղությունները			
Ծրագրային ուղղությունները որոշվում են ըստ կազմակերպության ռազմավարական ուղղությունների	1		1
Որոշում ենք կազմակերպության շահառուների կարիքների գնահատման հիման վրա կազմակերպության տարեկան ժողովին՝ ամբողջ թիմով	1		1
Որոշում ենք՝ կախված դոնորների կողմից առաջարկվող ծրագրերից	1	2	3
Որոշում ենք մեր տարեկան ժողովին՝ ամբողջ թիմով	4	1	5
Որոշումները կայացնում ենք կազմակերպության շահառուների հետ համատեղ՝ ելնելով նրանց կարիքներից	3	6	9
Ուղղությունները որոշվում են ղեկավարության կողմից		1	1
Ընդամենը	10	10	20

Երբ համեմատում ենք ֆոնդահայթայթման պլանի առկայությունն ու ծրագրային ուղղությունների ընտրության մոտեցումը (տե՛ս աղյուսակ 6), հստակ երևում է, որ ֆոնդահայթայթման պլանի կամ հատուկ մասնագետի բացակայությունը մատնանշող կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը (10-ից 6-ը) նաև նշել է, որ ծրագրային ուղղությունները որոշվում են շահառուների հետ համատեղ՝ ելնելով նրանց կարիքներից: Այսինքն՝ կարելի է փաստել, որ այդ կազմակերպությունների պարագայում առաջին տեղ է մղվում հանպատրաստի, բայց կարիքից բխող և ոչ թե նախօրոք պլանավորած և միգուցե այդ պահի կարիքներին արդեն չհամապատասխանող ծրագրերի իրականացումը:

Այուամենայնիվ, ֆոնդահայթայթման պլանի կամ համապատասխան մասնագետի բացակայությունն իր հետ բերում է նաև որոշակի բացասական կողմեր, այն է՝ որոշ դոնորների պահանջներին ծանոթ չլինելը, համապատասխան մոտեցումներին ու ծրագրային նրբություններին չտիրապետելն ու դրանք չարժևորելը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել ծրագրերի առաջարկների մերժման:

Եզրակացությունից բխող առաջարկություն #4

ՀՀ-ում գործող ֆեմինիստական կազմակերպությունները կարիք ունեն ֆոնդահայթայթման պլանների ու գործընթացի առանձնահատկությունների ոլորտում կարողությունների բարձրացման և կարևորման:

Հաշվի առնելով վերոնշյալ պատկերը, այն է՝ ՀՀ-ում ֆեմինիստական կազմակերպություններին բաժին հասնող ոչ բավարար ֆինանսավորումը և ցածր կայունությունը, կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը (95%) նշել է, որ ներկայումս ակտիվ փնտրում է կազմակերպության ֆինանսավորման այլընտրանքային միջոցներ (տե՛ս հավելված 1, աղյուսակ 15): Որպես ֆինանսավորման այլընտրանքային միջոցներից առավել հաճախ հանդիպող տարբերակ հարցվողները նշել են սոցիալական ձեռնարկության հիմնումը (45%), ավելի մեծ կազմակերպությունների հետ կոալիցիաների ստեղծումն ու համատեղ դրամաշնորհային ծրագրերի ներկայացումը (35%), ինչպես նաև այլ հնարավոր տարբերակներ (20%), օրինակ՝ տեղական բիզնես համայնքի հետ աշխատելը՝ սեփական արտադրանքի սպառման միջոցով, սփյուռքի հետ համագործակցությունը, ինչպես նաև նոր միջազգային դոնորների հետ հարաբերությունների ու համագործակցության հեռանկարների ստեղծումը:

Եզրակացությունից բխող առաջարկություն #5

ՀՀ-ում ֆեմինիստական կազմակերպությունները ունեն ֆինանսական կայունության բարձրացման տարբեր մեխանիզմների ու մոդելների ներկայացման ու կիրառման, փորձի փոխանակման պրակտիկաների ու հարթակների ստեղծման կարիք:

Կազմակերպությունների կարողությունների զարգացման կարիքները

Հայաստանում կանանց հիմնադրամը եզակի կառույց է, որն առաջնորդվում է ֆեմինիստական ֆիլանթրոպիայի սկզբունքներով և աջակցում է նորաստեղծ կամ կայացած ֆեմինիստական կազմակերպություններին՝ իրականացնելու բազմաբնույթ ծրագրեր՝ ուղղված ֆեմինիստական շարժման զարգացմանը և գենդերային հիմնահարցերի լուծմանը: Հիմնադրամը ֆինանսական աջակցությունից բացի իրականացնում է նաև կազմակերպությունների կարողությունների զարգացում, հանդիսանում է կոլեկտիվ խնամքի մոտեցումը կիրառող միակ կառույցը ՀՀ-ում, ինչն էլ նոր հորիզոններ է բացում Հիմնադրամի հետ համագործակցող կազմակերպությունների համար: Հետևաբար, Հիմնադրամի առաքելությունից ու գործունեությունից բխում է ՀՀ-ում գործող ֆեմինիստական կազմակերպությունների կարողությունների զարգացման կարիքների գնահատումը:

Սույն հարցման շրջանակներում մասնակիցների կողմից վեր են հանվել այն կարողությունների զարգացման կարիքները, որոնք, ըստ կազմակերպությունների, կարող են իրենց ֆինանսապես ավելի կայուն դարձնել:
Դրանց շարքում են՝

- Դոնորների հետ կապերի ընդլայնում: Կազմակերպությունները նշել են, որ կարևորում են ինչպես բիզնեսի, այնպես էլ անհատ բարերարների հետ հարաբերություններ կառուցելու անհրաժեշտությունը: Սա վճռորոշ քայլ է նրանց նախաձեռնություններին ֆինանսական աջակցություն ապահովելու համար:
- Անգլերեն լեզվի բարելավված հմտություններ: Նշվել է անգլերեն լեզվի կարողությունների բարձրացումը, քանի որ դա անհրաժեշտ ու կարևոր է դոնորների հետ արդյունավետ հաղորդակցության համար՝ հատկապես միջազգային համատեքստում դոնորների հետ գործ ունենալիս:

- Ֆոնդահայթայթման պլանավորում: Կազմակերպությունները նշել և կարևորել են ֆոնդահայթայթման համակարգված պլանի առկայության անհրաժեշտությունը: Սա ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ ֆոնդահայթայթման ռազմավարության մշակում, համապատասխան դոնորների նույնականացում և այլն:
- Բիզնես գրագիտություն: Կազմակերպությունները նշում են բիզնես գրագիտության դասընթացների անհրաժեշտությունը, ինչը կնպաստի կազմակերպության ֆինանսական միջոցներն ու գործառնություններն արդյունավետ կառավարելուն:
- Կառավարչական կարողությունների զարգացում: Կազմակերպությունները նշել են կառավարչական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, ինչը ներառում է քաղաքականությունների մշակում այնպիսի ասպեկտներում, ինչպիսիք են՝ ծգնաժամային կառավարումը, ռիսկերի կառավարումը և այլն:
- Ֆինանսական կայունության ձևավորում: Սա ներառում է շահերի պաշտպանություն, կայուն ֆինանսական քաղաքականություն և երկարաժամկետ ֆինանսավորման աղբյուրների հասանելիություն:
- Միջազգային կազմակերպությունների հետ ցանցային կապի ստեղծում: Միջազգային խոշոր կազմակերպությունների հետ կապ հաստատելը կարող է համագործակցության և ֆինանսավորման հնարավորություններ բացել:
- Մարդկային ռեսուրսներ: Կազմակերպությունները մատնանշել են մասնագիտացված անձնակազմ ունենալու անհրաժեշտությունը, ինչպիսիք են, օրինակ, դրամահավաքի մասնագետները և դրամաշնորհներ գրողները: Այս մասնագետների առկայությունը թիմում կարող է նպաստել ավելի մեծ ֆինանսավորման ձեռք բերմանն ու աշխատանքի որակի բարձրացմանը:
- Պրոֆեսիոնալիզմի և կոմպետենցիայի բարձրացում: Կազմակերպությունները նշել են տարբեր ոլորտներում ավելի պրոֆեսիոնալ դառնալու ցանկությունը, ինչին կարող են նպաստել տարբեր վերապատրաստումներն ու փորձի փոխանակման հանդիպումները:

- Հիմնական ֆինանսավորում և կայուն ֆինանսական քաղաքականություն: Ծեշտվել է հիմնական ֆինանսավորման և ֆինանսական կայունության ապահովման քաղաքականության անհրաժեշտությունը, որն էական նշանակություն ունի հիմնական գործառնական ծախսերը հոգալու համար: Վերջիններիս առկայության դեպքում կազմակերպությունները կդադարեն կախյալ լինել փոքր ծրագրային դրամաշնորհներից և անընդհատ նոր ֆինանսական միջոցների հայթայթման անհրաժեշտությունից:

Այսպիսով, կազմակերպություններն առաջ են քաշել մեծամասամբ կանխատեսելի կարողությունների զարգացման կարիքներ, որոնց բավարարման պարագայում հնարավոր է նպաստել կազմակերպությունների ֆինանսական կայունության բարձրացմանն ու ամրապնդմանը: Նշված կարողություններից շատերն իրենք իրենցով փոխանցվում են Հայաստանում կանանց հիմնադրամի հետ համագործակցության ընթացքում և միջոցով, սակայն այս գործընթացը կարող է ստանալ նաև որոշակի համակարգված և ավելի ֆորմալ բնույթ՝ առկա փորձի ու գիտելիքների առավել կառուցվածքային փոխանցման համար:

Ակնկալիքները Հայաստանում կանանց հիմնադրամից

Թվարկված ընդհանուր կարիքներին զուգահեռ՝ հարցմանը մասնակից կազմակերպությունները առանձնացրել են կոնկրետ այն ակնկալիքները, որոնք իրենք կարող են ունենալ Հայաստանում կանանց հիմնադրամից՝ կազմակերպությունների ֆինանսական կայունության բարձրացման համար: Խմբավորելով կազմակերպությունների կողմից բարձրաձայնված կետերը՝ հնարավոր եղավ առանձնացնել 7 խմբի ակնկալիքներ, որոնք, կազմակերպությունների կարծիքով, Հիմնադրամի կողմից իրականացվելու արդյունքում կարող են մեծ աջակցություն լինել կազմակերպությունների համար:

Այսպիսով, Հիմնադրամը ՀՀ-ում ֆեմինիստական կազմակերպությունների կարող է աջակցել՝ ստեղծելով հարթակ կամ հնարավորություն մեծ ու համատեղ դրամաշնորհների դիմելու համար, որին զուգահեռ անհրաժեշտ է պարբերական կարողությունների զարգացում և աջակցություն՝ ուղղված ինստիտուցիոնալ կայունության ապահովմանը, ինչին կարող է նպաստել նաև տրամադրվող դրամաշնորհների ժամկետների երկարացումը: Որպես առանձին էպիզոդիկ աջակցության կարիքներ նշվել են գործունեության ծավալման համար անհրաժեշտ ապահով տարածքի ստեղծման հնարավորությունների ու դրամահավաքների կազմակերպում, կազմակերպության սեփական արտադրանքի մարքեթինգային արշավի կազմակերպում, ինչպես նաև՝ կոլեկտիվ խնամքի և հոգեբանական աջակցության կազմակերպում:

Կազմակերպությունների բարձրաձայնած կարիքները ներկայացված են ստորև՝ ըստ վերոհիշյալ կատեգորիաների՝

1. Մեծ և համատեղ դրամաշնորհներին դիմելու հնարավորությունների ստեղծում

«Մենք կարիք ունենք ներառվելու ավելի մեծ դրամաշնորհներին դիմելու գործընթացի մեջ մեր աջակից ֆեմինիստական կազմակերպությունների հետ և շատ շնորհակալ կլինենք, եթե Հիմնադրամը մեզ աջակցի այդ հարցում»:
Գործունեությունը՝ Երևան

«Ծանոթացնել դոնորների հետ, որոնք աշխատում են առանձին կառույցների հետ, տրամադրել երաշխավորագրեր»:
Գործունեությունը՝ ՀՀ մարզեր

«Միջազգային կազմակերպությունների հետ կապի հաստատում, ֆոնդահայթայթման կայուն միջոցների ձեռքբերման աջակցություն»:
Գործունեությունը՝ Կոտայք

«Համատեղ ծրագրերի կարողանանք դիմել»:
Գործունեությունը՝ Սյունիք

2.Կարողությունների զարգացում

«Աջակցել կազմակերպության անդամների կարողությունների զարգացմանը վերոնշյալ թեմաներով, շարունակել համագործակցությունը, պատվիրակել մեր առաքելությանը համապատասխան ծառայությունների իրականացում՝ մեր շահառուների համար»:
Գործունեությունը՝ Տավուշ, Գեղարքունիք

«Կազմակերպության ֆինանսական կայունություն ունենալու համար նախատեսում ենք մատուցել վճարովի ծառայություններ՝ երեխաների և կանանց համար. օր.՝ ոչ ֆորմալ կթական ծրագիր և այլն: Դրա համար մեզ անհրաժեշտ է դասընթացավարների հմտությունների վերապատրաստում և որոշակի նյութական ռեսուրսներ»:
Գործունեությունը՝ Տավուշ

«Կանանց հիմնադրամը կարող է տրամադրել ճկուն ֆոնդեր՝ կազմակերպության կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների իրականացման համար»:
Գործունեությունը՝ ՀՀ մարզեր

«Փորձագիտական տեխնիկական աջակցություն կարողությունների զարգացման համար և հնարավորության դեպքում՝ կազմակերպության ֆինանսավորման այլընտրանքային միջոցներին ներդրմանը նպաստող դրամաշնորհներ»:
Գործունեությունը՝ Ծիրակ

3. Ինստիտուցիոնալ կայունության աջակցում

«Ակնկալում ենք աջակցություն ինստիտուցիոնալ կայունության ապահովման հարցում»:
Գործունեությունը՝ Երևան

«Ակնկալում ենք աջակցություն հրատապ խնդիրների լուծման, կազմակերպության կայունությանը նպաստող աջակցություն թե՛ ֆինանսական և թե՛ գիտելիքի ու փորձի առումով»:
Գործունեությունը՝ Լոռի

«Հայաստանում կանանց հիմնադրամի ֆինանսական աջակցությունը հանդիսանում է մեր հիմնական ֆինանսավորման աղբյուրը: Հիմնադրամի հետ համագործակցում ենք 2019 թվականից: Հիմնադրամի ինստիտուցիոնալ աջակցությունը մեր կազմակերպության ֆինանսական կայունության երաշխիքն է հանդիսանում»:
Գործունեությունը՝ Երևան

4. Դրամաշնորհների ժամկետների երկարացում

«Երկարաժամկետ դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու հնարավորություն տա /մինչև 3 տարի ժամկետով/»:
Գործունեությունը՝ Վայոց ձոր, Արարատ

«Կարողանա ֆինանսավորել երկարաժամկետ ծրագրեր»:
Գործունեությունը՝ Երևան, ԼՂ

5. Գրասենյակի ապահովում

«Համատեղ դրամահավաք արշավ իրականացնել՝ կազմակերպության համար գրասենյակային տարածք գնելու նպատակով»:
Գործունեությունը՝ Շիրակ

«Ցանկալի կլիներ, որ Հայաստանում կանանց հիմնադրամի կողմից հայտարարված դրամաշնորհներ ուղղված լինեին Կազմակերպության կայունության ապահովմանն ու անվտանգ տարածքի ձեռքբերմանը, քանի որ այս պահին Կազմակերպության առաջնային կարիքը սեփական անվտանգ տարածք ունենալն է»:
Գործունեությունը՝ Ծիրակ

6. Հավաքական խնամք / Collective care

«Հնարավորության դեպքում՝ հոգեբանական առողջության բարելավման և աշխատանքային այրումը նվազեցնող հանդիպումների մի մասի ֆինանսավորմամբ, քանի որ այս պահին դրանք հոգում ենք անհատական նվիրատվությունների հաշվին, որոնք սուղ են»:
Գործունեությունը՝ Երևան, Լոռի, Ծիրակ

7. Սեփական արտադրանքի մարքեթինգ

«եթե Հիմնադրամը կարող է մեզ կապել մարքեթինգային ոլորտի մասնագետների հետ՝ ապրանքների փաթեթավորման և առաջխաղացման համար, մենք կկարողանանք կամավորների խրախուսման ֆոնդ ստեղծել և առնվազն ադմինիստրատիվ ծախսերը ծածկել: Դա կօգնի չկտրել կապը շահառուների հետ և կամրջել ծրագրերը»:
Գործունեությունը՝ ՀՀ մարզեր

Այսպիսով, ՀՀ-ում գործող ֆեմինիստական կազմակերպությունները, ծանոթ լինելով Հայաստանում կանանց հիմնադրամի ֆիլանթրոպիկ գործունեությանը, նշել են աջակցության ոլորտներ, որոնցում Հիմնադրամն ունի փորձառություն և գիտելիք, որով կիսվելու դեպքում կարող է նպաստել փոքր կազմակերպությունների զարգացմանն ու գործունեության խթանմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իրականացված հետազոտությունը ևս մեկ անգամ փաստում է, որ կանանց և ֆեմինիստական կազմակերպություններին գենդերային արդարության և ֆեմինիստական օրակարգերի շրջանակներում իրականացվելիք ծրագրերի համար տրամադրվող ֆինանսական ռեսուրսները սահմանափակ են և բաշխված են անհավասարաչափ: Տրամադրվող ֆինանսավորումները հիմնականում ունեն հստակ ծրագրային բնույթ և կազմակերպությունների գործունեության իրականացման համար չեն բավականացնում, զուգահեռաբար խոչընդոտ են նաև դրամաշնորհների իրականացման համար նախատեսված ժամկետները, որոնք որակվում են որպես կարճաժամկետ: Ըստ էության՝ բոլոր մասնակիցների կողմից բարձրաձայնվել է ծրագրերի ժամկետների երկարաձգման անհրաժեշտությունը: Դրանք հանդիսանում են որպես գլխավոր խոչընդոտներ, որոնք գործում են ի վնաս կազմակերպությունների առաջխաղացման: Տրամադրվող ֆինանսական միջոցների անբավարարությունը նաև փաստում է մասնակից կազմակերպությունների՝ առանց ֆինանսավորման ոչ ավել, քան երեք ամիս գործունեությունը շարունակելու իրողությունը:

Այս պատկերը խոսում է այն մասին, որ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում ֆեմինիստական կազմակերպություններին ու ծրագրերին ուղղված գումարներն ունեն հստակ ճեղքվածք կարիքի ու հնարավորությունների միջև: Այսինքն՝ հասարակությունում առկա ֆեմինիստական օրակարգերի և խնդիրների ուղղությամբ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունն ավելի մեծ է, քան դրան տրամադրվող ֆինանսական միջոցները, ինչի արդյունքում կազմակերպությունները, կարևորելով իրականացվող ծրագրերի նշանակությունն ու անհրաժեշտությունը, իրականացնում են դրանք հաճախ կամավորության սկզբունքից ելնելով և հանգում են մասնագիտական այրման խնդրին, ինչն էլ իր հերթին բերում է հետագա ծրագրերի իրականացմանը տրամադրվող էներգիայի ու հնարավորությունների սպառմանը: Այդպիսով, ստեղծվում է անավարտ շրջապտույտ, որտեղ իրար են բախվում գոյություն ունեցող կարիքների մեծաքանակությունն ու տրամադրվող ռեսուրսների սահմանափակությունը:

Հավելված 1. Ընդհանուր վիճակագրություն

Ստորև աղյուսակներով ներկայացված են ֆեմինիստական ՀԿ-ների հիմնական բնութագրիչ վիճակագրական տվյալները՝ ըստ հարցման հարցերի ու մեթոդաբանության:

Աղյուսակ 7. Ինչպե՞ս են որոշվում Ձեր կազմակերպության ծրագրերի/ծրագրային ուղղությունները

Որոշման կայացման մոտեցումներ	ՀԿ
Որոշումները կայացնում ենք կազմակերպության շահառուների հետ համատեղ՝ ելնելով նրանց կարիքներից	9
Որոշում ենք մեր տարեկան ժողովին՝ ամբողջ թիմով	5
Որոշում ենք՝ կախված դոնորների կողմից առաջարկվող ծրագրերից	3
Ծրագրային ուղղությունները որոշվում են ըստ կազմակերպության ռազմավարական ուղղությունների	1
Որոշում ենք կազմակերպության շահառուների կարիքների գնահատման հիման վրա կազմակերպության տարեկան ժողովին՝ ամբողջ թիմով	1
Ուղղությունները որոշվում են ղեկավարության կողմից	1
Ընդամենը	20

Աղյուսակ 8. Որքա՞ն է կազմել նախորդ տարվա Ձեր բյուջեն

Բյուջե	ՀԿ
Մինչև 30 000 ԱՄՆ դոլար	6
50 000- 150 000 ԱՄՆ դոլար	6
150 000- 300 000 ԱՄՆ դոլար	3
30 000 - 50 000 ԱՄՆ դոլար	3
300 000- 500 000 ԱՄՆ դոլար	2
Ընդամենը	20

Աղյուսակ 9. Տարեկան որքա՞ն գումար է Ձեզ պետք կազմակերպության առօրյա գործունեությունը պահպանելու համար

Բյուջե	ՀԿ
50 000- 150 000 ԱՄՆ դոլար	13
150 000- 300 000 ԱՄՆ դոլար	3
500 000 ԱՄՆ դոլարից ավել	2
300 000- 500 000 ԱՄՆ դոլար	1
Մինչև 50 000 ԱՄՆ դոլար	1
Ընդամենը	20

Աղյուսակ 10. Ոլորտում ակտիվ այլ կազմակերպությունների հետ համեմատ՝ դուք Ձեզ համարում եք...

Դատողություններ	ՀԿ
Հայաստանում գործող մեզ նման կազմակերպությունները գտնվում են ֆինանսապես անկայուն վիճակում	11
Փոքր ֆինանսավորում ունեցող և գոյատևող կազմակերպություն	6
Ֆինանսապես ավելի կայուն և ավելի արագ զարգացող կազմակերպություն	3
Ընդամենը	20

Աղյուսակ 11. Եթե չունենաք որևէ ֆինանսավորում, քանի՞ ամիս կկարողանաք շարունակել առօրյա գործունեությունը

Ժամանակահատված	ՀԿ
Հազիվ մեկ ամիս	4
Մեկ տարուց ավելի	2
Մեկից երեք ամիս	11
Վեց ամիս	3
Ընդամենը	20

Աղյուսակ 12. Արդո՞ք կազմակերպությունն ունի պահուստային գումար / ռեզերվներ/:

Ռեզերվ	ՀԿ
Այո	6
Ոչ	14
Ընդամենը	20

Աղյուսակ 13. Արդյո՞ք կազմակերպությունն ունի ֆինանսական կայունության քաղաքականություն

Ֆինանսական կայունության քաղաքականություն	ՀԿ
Այո	5
Ոչ	15
Ընդամենը	20

Աղյուսակ 14. Արդյո՞ք կազմակերպությունն ունի ֆոնդահայթայթման պլան և մարդ/իկ, ովքեր զբաղվում են ֆոնդահայթայթմամբ

Ֆոնդահայթայթման մեխանիզմներ	ՀԿ
Այո	10
Ոչ	10
Ընդամենը	20

Աղյուսակ 15. Արդյո՞ք ներկայումս փնտրում եք կազմակերպության ֆինանսավորման այլընտրանքային միջոցներ

Ֆինանսավորման հայթայթում	ՀԿ
Այո	19
Ոչ	1
Ընդամենը	20

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ